



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 նոյեմբերի 2022թ. թիվ 808-Ա

**Ա. ՄԽՈՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Արմանիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2022 թվականի նոյեմբերի 21-ի գրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Արամ Արտավազդի Մխոյանին վերանշանակել «ՀՀ Լոռու մարզի Արմանիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում և նրա հետ 2018 թվականի հունվարի 19-ին կնքած աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել հինգ տարի ժամկետով՝ մինչև 2028 թվականի հունվարի 19-ը ներառյալ:

2. Ա. Մխոյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 20-ից:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

22/11/2022

X

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

2022թ. նոյեմբերի 22
ք.Վանաձոր